



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

20.11.2013 թ. N

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

#### Հարգելի՛ գորակոչիկներ


Շնորհավորում եմ բոլորիդ կարևորագույն ու նշանակալի իրադարձության՝ գորակոչի տոնական առիթով և մաղթում, որ գալիք երկու տարիները դառնան Ձեր կյանքի այն կարևորագույն ժամանակահատվածը, որի ընթացքում կամրապնդվի հայրենիքի նկատմամբ սերն ու նվիրվածությունը:

Հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում գրեթե երբեք նախահարձակ չի եղել, այլ ջանասիրաբար աշխատել և շենացրել է իր երկիրը, բայց միևնույն ժամանակ ստիպված է եղել պաշտպանվել թշնամուց և հայրենի հողը պահպանելուն նվիրված պայքարում տոնել է փառահեղ հաղթանակներ, որոնցից առանցքայինը՝ Արցախյան հերոսամարտում:

Դառնալով հայ ազգի զինվորը՝ Դուք պետք է քաջ գիտակցեք, որ հասունացել է այն պահը, երբ պաշտպանելով մեր պետության սահմանները՝ յուրաքանչյուրդ կդառնաք տարածաշրջանի ամենամարտունակ բանակի հզորացման, հետևաբար նաև հայոց պետականության ձեռքբերումների մի մասնիկը:

Կրկին շնորհավորում եմ և ցանկանում, որ ծառայության ընթացքում լինեք խոհեմ, առողջ, պատասխանատու և ամենակարևորը՝ քաջ գիտակցեք Ձեր նախորդ սերունդների արյան գնով ձեռք բերված անկախության արժեքը:

#### Հարգանքներով

 Կ. ՀԱՀԳԱԼ ԴՅԱՆ